

**ՊԱՏՄԱԿԱՆ**

**ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ**  
ԵՒ

**ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ**

Փ.

Յազկերտին ցատումք. — Գերագոյն ժողով. — Հայ, Վրացի եւ Աղուան նախարարներուն Տիգրան մեկնելու հրամանք. — Անոնց մեկնումք. — Յազկերտին նախարարներուն ընդունելութիւնք եւ բանտարկութիւնք. — Անոք սպառնական վեճիւք. — Նախարարաց առ երեսս ուրացութիւնք. — Վարդանին յայտարարութիւնք Յազկերտին:

Մեր երկու պատմիչներն ալ կը վկայեն թէ, Հայոց կողմէն Պարսից արքունիք՝ Տիգրան նամակ հասաւ: Հայոց կողմէն զրկուած նամակը այնպիսի խիստ և ընդվիցեցուցիչ ոճով մը գրուած էր որ, Յազկերտ արքան որ ցատկուտ անձ մըն էր արդէն, կատղեցաւ և զայրացաւ: Այս պատասխանին վրայ, հարկ տեսնուեցաւ Յազկերտին գլխաւորութեամբ գերագոյն ժողով մը գումարել, որուն ներկայ գտնուեցան Մոզպեաք, մոզերուն գլխաւորները և Պարսից զենին առաջնորդները, պետութեան աւագանին ու Միհրնեսրահը: Այս ժողովին, որ կերպով մը կրօնա-քաղաքական ժողով կրնանք կոչել, գլխաւոր և անմիջական օրակարգը եղաւ Հայոց կողմէն Պարսից արքունիք զըրկուած նամակը որ թէ՛ խիստ և թէ՛ բուն ոճով մը գրուած էր և թէ համարձակ կերպով կարծես թէ ասպարէզ կը կարգար Պարսից արքունիքին: Ժողովին մասնակցող առաջնորդները և ղեկավարները, ամէն ոք, Յազկերտ արքան գրգռելու և անոր ցատումը ու զայրոյթը աւելցնելու կ'աշխատէին, ամէն ոք, իր կողմէն անտեղի և անդէպ կը համարէր Հայոց պատասխանը և ներկաները առաջարկ մը ներկայացուցին ժողովին, Հայոց դէմ վերջնական և վճռական որոշում ու հրաման ձեռք ձգելու համար, ինչ որ Յազկերտ արքային ալ փափաքածն էր արդէն:

Անոնք կ'ըսէին Յազկերտ արքային, Յունաց կայսրն իսկ քու հրամանէդ դուրս չելլեր և Հոնաց թագաւորն ալ քեզի, քու տէրութեանդ կը ծառայէ, ուրիշ ո՞ւր Հայերը կը համարձակին հրովարտակը անարգել և Չեզի այսպիսի խիստ, սպառնական ու անարգական լեզուով պատասխանել: Եւ անոնք միտսին և միտքերան կ'աւելցնէին և կ'ըսէին թէ, ի մասնաւորի Հայերը տեղէ մը օգնականութեան յոյս մը չունենային, այդպիսի ընդդիմութիւն մը, հակառակութիւն մը իրենց միտքէն անգամ չէին կըրնար անցնել, թող թէ մասնաւոր նամակով մը յայտարարել (Փար. 46): Այսու հանգիստ, Յազկերտ արքան արշաւանքի մը կամ սաստիկ կոտորածի մը խիստ հրաման մը չ'արձակեց ամենեւին: Հոս ևս, Միհրնեսրահ, Յազկերտին հաւատարիմ խորհրդականը և առաջնորդը իր զերին մէջ էր և թագաւորին ըսաւ երբ տեսաւ անոր սաստիկ տրտմութիւնը և սրտաբեկութիւնը:

«Առ ի՞նչ է քոյ այդ մեծ տրտմութիւնդ, զի եթէ կայսր չելանէ ըստ քոյ հրաման, և Հոնք կան ի ծառայութեան, ո՞ր մարդ է յերկրի՝ եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ: Տիրաբար հրաման տուր ի ներքս, և ամենայն որ զինչ և անես՝ վաղվադակի կատարի» (Բ. Յեզանակ, էջ 75):

Ասոր վրայ, Յազկերտ ներս կանչեց արքունական աւագ զպրպպետ-քարտուզարը, և հրամայեց անոր որ հրովարտակ մը գրուի, ոչ թէ իրրե «առ սիրելիս և առ պիտանիս», «այլ բանս զայրազինս իրր առ ատելիս և անպիտանս, չյիշելով ամենեւին զմեծամեծ վաստակս տիրասէր մարդկան» (նոյն): Յազկերտ, այս հրովարտակով Հայ նախարարներուն ամենէն աւելի ազդեցիկներէն եւ նշանաւորներէն տասը հատը այսպէս յանուանէ զարս՝ զոր ինքն ճանաչէր», Տիգրան կը հրաւիրէր, որպէս զի՝ անոնց միջոցաւ գործը յաջողցնէ: Տիգրան հրաւիրուած այս նախարարներն էին հետեւեալները. — 1. Վասակ Սիւնի, 2. Ներշապուհ Արծրունի, 3. Արտակ Ռըշտունի, 4. Գագրիոյ Ռորիստունի, 5. Վարդան Մամիկոնեան, 6. Արտակ Մովսէսի, 7. Մանէճ Ապահունի, 8. Վահան Ամատունի, 9. Գիւտ Վահեւունի և 10. Շմաւոն Անձեւացի:

Հայոց վրայ գործածուած խիստ և զայրագին ու անողորմ միջոցները Վրաց և Աղուանից վրայ ալ գործադրուած էին, իրրև քրիստոնեայ ու կրօնակից ու հաւատակից Հայոց:

Հայոց նման, Վրացիներն ու Աղուաններն ալ, առանձինն մերժումի պատասխաններ զրկած էին Պարսից արքունիքին: Թերեւս, երեք ազգերուն միաբանական արարքը ու միութենական շարժման պարագաները արգելք կը հանդիսանային Յազկերտին, բռնակալ ու վճռական բուռն միջոցներու զիմելէ: Հայոց զրկուած հրովարտակին ու հրամանին համաձայն, Վրացի ու Աղուան գլխաւոր նախարարներն ևս մասնաւոր հրովարտակներով Տիզրոն ելթալու հրաման ստացան:

Երբ Տիզրոնէն Հայոց, Վրաց ու Աղուանից գրուած արքունական մասնաւոր հրովարտակներն ու հրամանագրերը եկան, երեք ազգերը իրարու միջև պատգամաւորութիւններ փոխանակեցին և խորհրդակցութիւններ կատարելով՝ որոշեցին իրենց հետեւելիք ուղղութիւնը: Երեք ազգերն ալ մտածեցին և տեսան թէ՛ «զչերթալն որպէս ապստամբութիւն կարծեցուցանել» լաւ բան մը չէր, ուստի իրենք «զչերթալն լաւագոյն» համարեցին:

Հայեր, Վրացիներ ու Աղուաններ, իրենց ուխտին մէջ հաստատուն մնալու ուխտագրութիւն ըրին Ս. Աւետարանին վրայ. «Առնէին ուխտագրութիւնս, և բազում երգմամբ աւետարանին հաստատէին»: Գործին յաջողութեան ելքը Աստուծոյ յանձնելով, որոշեցին ճամբայ ելլել (Փար. 47):

Հայոց կողմէն հրաւիրուած 10 նախարարներէն 8ը, բացի՝ Արտակ Ռչտունիէ և Գաղիշոյ Սորիստունիէ, Արտաշատի ժողովին ներկայ գտնուած էին արդէն և հաստատամտութեամբ երգում ըրած էին հաւատարիմ մնալու իրենց կրօնքին:

Երբոր Տիզրոնէն հրաւիրուած 10 նախարարներուն մեկնումի որոշումը տրուեցաւ Վաղարշապատի մէջ, Յովսէփ կաթողիկոսին կողմէն հայրապետական օրհնութիւն և քաջալերութեան յորդորներ ստանալով՝ դէպի իրենց գաւառները մեկնեցան, և ճանապարհի կարգադրութիւնները աւարտելով «գնացին յւերաքանչիւր տեղեաց ի դուռն արքունի» (Բ. Յեղանակ,

էջ 76): Վրացիներէն կը յիշուին «Բգեշին Աշուշայ և այլ տանուտեարք աշխարհին» (Փար. 47), իսկ Աղուաններէն զացողները անուններով յիշատակուած չեն: Տիզրոն հրաւիրուած տասը հայ նախարարները, միասին կատարեցին մայրաքաղաք մուտքերնին, իւրաքանչիւրը իրեն հետ այրուած ի հետեւորդներու խումբ մը ունենալով: Ի մեծ զարմացումն տասը նախարարներուն, երբ Տիզրոն հասան, տեսան թէ սովորական եզոզ պատուասիրութիւններն անգամ իրենց զլացուեցան: Ասով հանդերձ, առանց ուշացումի, առանց յապաղման «յանդիման լինէին մեծ թագաւորին» իսկ օրն էր «ի մեծի շարթու զատկին» որ է 540 տարւոյն, աւագ շաբաթօրը: Թերեւս, մասնաւոր զիտումով որոշուած էր այդ օրը, քրիստոնէից զատկի տօնը անաւազելու համար: Յազկերտ, ըստ ընկալեալ սովորութեան, երբ ներկաներուն կողմէն հպատակութեան և հնազանդութեան յայտարարութիւնը լսելէն վերջը, կը յայտնէ թէ՛ ուրեմն անտարակոյս և առանց այլ և այլի պէտք է իր հրովարտակին հնազանդին, մինչդեռ իրենք իրենց նամակներով յանդգնած էին արքայական հրովարտակին չհնազանդիլ, ու կ'աւելցնէ թէ ինքը զիտէ պէտք եղած բոլոր միջոցները կիրարկել:

Յազկերտ՝ եղիշէի բացատրութեամբը, կատղած գազանի մը երեւոյթը կ'առնէր և նախարարներուն գլխուն ծանր սպառնալիքներ կը տեղացնէր, «Մանչելով բարբառ արձակեալ, և ասէ. կրդուեալ իցէ իմ յարեգակն, ի մեծ աստուածն, որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբն կենդանացնէ զամենայն գոյացեալսն. եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երեւումն սքանչելւոյն, ընդ իս զիւրաքանչիւր ծուր նմա ոչ կրկնեջիք՝ խոտովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս շարչարանացն ի վերայ ամելով, մինչև ակամայ կատարեջիք զկամս հրամանաց իմոց» (Բ. Յեղանակ, էջ 79):

Այս սպառնալիքներուն վրայ, Քաջն Վարդան Մամիկոնեան զօրավարը, առաջ կ'անցի և ամենուն կողմէ կը խօսի Յազկերտին, թէ՛ Հայերը պետական ծառայութիւններուն մէջ երբեք զանցառու զըտնրուած չեն, թէ խաղաղութեան և թէ պա-

տերազմի ժամանակ, և ասկէ վերջն ալ իրենք այդպիսի արարքներու մէջ չեն զբաղուիր, սակայն և այնպէս իրենց բոլորին համար, կրօնական խնդիրը իր խորքին մէջ խղճի խնդիր ըլլալով, չեն կրնար իրենց հաւատքը փոխել (Փար. 49): Հայ նախարարները քաղցրութեամբ հետեւեալը կը յիշեցնէին Յազկերտ արքային. «Քեզի կը յիշեցնենք, արքայից արքայ Շապուհի ժամանակը, որ քու մեծ հորդ Յազկերտին հայրն էր: Աստուած անոր տուաւ Հայոց երկիրն ժառանգութիւնը այս կրօնքով, որով՝ մենք ալ կ'ընթանանք այժմ. և մեր հայրերը և մեր հայրերուն մեծ հայրերը անոր կը ծառայէին ու սիրով կը կատարէին անոր բոլոր հրամանները, իսկ շատ անգամներ ալ, անկէ մեծ պարգեւներ կը ստանային: Այդ ժամանակներէն սկսեալ մինչև քու հորնական իշխանութիւնդ, մենք ալ միեւնոյն ծառայութիւնը մատուցինք, թերեւ՝ առաջիններէն աւելի լաւ կերպով» (Բ. Յեղանակ):

Ասոր վրայ Յազկերտ նորէն իր հրամանը կ'երեքկնէր և կը չորեքկնէր, սպառնալով զիրենք Սագաստան<sup>(\*)</sup> աքսորել, ընտանիքնին Սուժաստան<sup>(\*\*)</sup> զրկել, և

(\*) Սագաստան կամ Սահաստան անապատային և աւաղուտ երկիր մըն էր, երկիր Սակայ կամ Սագայ և կամ երկիր Սկիւթացոց անունով ծանօթ, որ Պարսկաստանի արեւելեան կողմը կը գտնուէր, որ այժմ Սէյխաստան կը կոչուի: Պարսկաստանէն դէպի Սագաստան երթալու համբան խիստ դժուար ու տաժանելի էր, լայնատարած անապատներէ պետք էր անցնել, ուր առաջէն զատ ուրիշ ունէ բան կարելի չէր գտնել: Սագաստանի մէջ թռուուոր իծեր, փասակար օձեր, խածնող ձկներ, զեռուներ աստուծութեամբ ասդին անդին կը վխտային իրենց որսը փնտռելու համար: Հոն գացողները հազիւ թէ կէ համբան կրնային հասնիլ, վասնի՛ անապատային խորշակներ,՝ ճանապարհորդութեան արգելք կը հանդիսանային և ուղեւորները յաճախ կը ստիպուէին իրենց ճամբայէն ետ վերադառնալ:

(\*\*) Սուժաստան, եղամք կամ Իլամացիք (Susiana) Բաղդաստանի մօտիկ նահանգ մըն էր, մայրաքաղաք ունենալով Սիւզան: Դարեհ արքային ժամանակ այս երկիրը Սատրապութեան աստիճանին բարձրացաւ: Երկիրն մէկ մասը լեռնոտ, իսկ մէկ մասն ալ քարերէր էր Բարեկաստանին նման: Պարսիկ տէրութեան սպատարները արքայական հրամանով դէպի Սագաստան կ'աքսորուէին, իսկ իրենց ընտանիքները և ազգականները խմբովին դէպի Սուժաստան աքսորի կը դատապարտուէին:

իրենց երկիրները քանդել, հրոյ ճարակ ընել և աւարի տալ և աւերակ դարձնել:

Այս անողորմ և խիստ սպառնալիքներուն վրայ, Հայոց, Վրաց և Աղուանից նախարարները իրենց միջև կը համաձայնին ժամանակ «աւուրս ինչ» խնդրել Յազկերտ արքայէն, որպէսզի կարենան «խորհիլ ընդ միմեանս»: Յազկերտ արքային հրամանաւ, այս շնորհը իրենց կը տրուի՝ խորհրդակցելու և խորհելու համար (Փար. 49): Տագնապի, նեղութեան և սրտմաշութի օրեր եղան զատկական տօնի օրերը: Հայ, Վրացի և Աղուան նախարարները միասին էին ու իրենց վրայ հսկողութիւն կար. շարունակ իրարու հետ կը խորհրդակցէին և չէին կրնար եզրակացութեան մը յանդիլ՝ Յազկերտին սպառնալիքները աչքի առջև ունենալով: Նախարարներէն ումանք Պարսկաստանի զինուորական ծառայութեան մէջ՝ կը գտնուէին, իսկ ուրիշներ ծորայ պահակէն անդին բանակին մէջ կը ծառայէին. կային նաև անոնք որ հեռուոր անապատներու մէջ կարգ մը ամրոցներու պաշտպանութեան համար զրկուած էին: Երկիրն ուժը տկարացած էր, եթէ երբեք իրենք ալ տեղի չտային ու աքսորուէին, երկիրը անտէր անտերունջ ու անպաշտպան պիտի մնար և իրենք եղած պիտի ըլլային «անթիւ բազմութեան արանց և կանանց, ծերոց և տղայոց, պատճառ յաւիտենից կորստեան» (Փար. 50):

Երբ քաղաք նախարարները ահաւոր տագնապի մատնուած էին, կ'ուզէին ելք մը գտնել այս խիստ, անհնարին և նեղ կացութեանէն դուրս ելլելու համար: Նախարարներուն մեծ մասը կ'ըսէին «Եթէ առ ժամ մի յանձն առնու՛մք պատճառանօք զհրամայեալս» ազատութիւն պիտի ստանանք երթալ «յիւրաքանչիւր շխարհ» և թէ անոնք իրենց տեղերը երթալու հրամանը ստանային «կեամք ծառայելով ճըլմարիտ հաւատոյն Գրիստոսի», իսկ հակառակ պարագային եթէ ստիպուէին «գնամք իւրաքանչիւր յօտարութիւն կնաւ և որդուովք» (Փար. 50): Այս էր նախարարներուն ընդհանուր միտքը, իրենց որոգայթէն ազատելու և զերծանելու համար: Սակայն և այնպէս, այս ամենուն դէմ կը կենար Վարդան Մամիկոնեան, առ երեսուրացողութիւնը դատապարտելի կը յայ-

տարբեր և կ'ըսէր ամենուն. «Մի' լիցի ինձ ստեղ Արարչին խնում պատճառանօք կամ ճշմարտութեամբ» (Փար. 51): Նախարարները չէին ուզեր ամենեւին Վարդանէն բաժնուիլ, վասնզի՝ իրենք շատ լաւ գիտէին թէ, ապագային առանց Վարդանին ոչ մէկ բան պիտի կրնային ընել, Վարդանի խօսքը միշտ իրենց համար մեծ կշիռ մը ունէր: Վարդան Մամիկոնեան, Հայոց ասպետական զօրավարը, իրեն համար ըստորնութիւն և փոքրողութիւն կը նկատէր երեսանց կամ արտաքնապէս ուրացողութեան տաժանքին ենթարկուիլը, հոս ի հանդէս կուգայ Վարդանին առիւծասիրտ, զօրաւոր և վեհ նկարագիրը: Ի տես Վարդանի այս ընդդիմութեան, Հայ նախարարները իրենց միջև խորհրդակցութիւններ կատարեցին և յանձնարարութիւն տուին Արտակ Մոկացիին և Աշուշա Վրացի բղշխին, որպէսզի երկուքը Վարդանը տարհամոզեն: Երկուքն ալ սիրելի էին Վարդանին, վասնզի առաջինը, «Վարդան առաւելարար պատուով սիրէր» իսկ երկրորդն ալ «էր այր խելացի և խորհրդական» և միեւնոյն ատեն Վարդանի եղբօր Հմայեակին քենեկալն էր (Փար. 52): Երկուքն ալ իրենց կարելին ըրին Վարդանը համոզելու համար, անել վիճակը բացատրեցին, ապագայէն ճառեցին, նոյնիսկ Ս. Գիրքէն վրկայութիւններ առաջ բերին, զոր օրինակ Քրիստոսի համար ըսուածը թէ «Որ ոչն զիտէր զմեզս, վասն մեր մեղս արար» (Բ. կրնթ. էջ. 21): Ինչպէս նաև Պօղոս առաքեալին գրածը թէ «Ուստիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ» (Հռով. Թ. 3):

Այս բոլոր տուեալները ցոյց կուտան թէ, Վարդան զօրավարը իբրև Սահակ Պարթև հայրապետին թոռը «յոյժ հմուտ էր և ընտել գրոց վարդապետութեան» (Փար. 52), միւս նախարարներն ալ կրօնական խնդրոց մէջ հմուտ և զարգացեալ անձեր էին:

Յազկերտ թագաւորին խորհրդականներէն մին, որ շատ կը ցաւէր նախարարներուն վրայ, ինքն ալ քրիստոնեայ «որ մկրտեալ իսկ էր յաւաղանն կենդանի», թերեւս բռնադատեալ ուրացող մը եղած էր «վասնզի ծածուկ ունէր զանքակ սէրն ի

Քրիստոս», խորհուրդ կուտար իրենց՝ կեղծ ուրացողութեամբ մը ազատիլ այս նեղ կացութենէն «առ անգամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուցեն» (Բ. Յեղանակ): Ժիշդ այդ օրերուն, գուժկան կը հասնէր արքունիք, թէ՛ Քուշանաց կողմէն նոր և մեծ յարձակում մը տեղի ունեցած էր Պարսից բանակին դէմ: Այս լուրին վրայ, Յազկերտ կը ստիպուէր անմիջապէս օգնութեան բանակ մը ղրկել և ինքն ալ կը պատրաստուէր մեկնելու: Այս անակընկալ և յանկարծական պատահարը լինէր մեծ օգնականութիւն նոցա յերկնից», Յազկերտ կը գոհանար պատուով դուրս ելլել, խոստումով գոհ կը մնար և հանդիսաւոր արարողութեան պայմանները ինքնին զանց կ'ընէր:

Նախարարները՝ երզմամբ Վարդանի՝ ստորագրութիւն կուտային թէ, երբ իրենց երկիրը վերադառնային՝ իր հրամաններուն պիտի հետեւին: Վարդան Մամիկոնեան կեղծ ուրացողութեան տաժանքը յանձն առաւ. «Յանձն առ վայր մի զպատճառանօք վիրաւորիլն»: Յազկերտ արքային կը հաղորդուէր թէ նախարարները յանձնառու կ'ըլլային իր հրամաններուն: Այսինքն՝ «ի տուն մոխրանոցին» երթալով, «կէսքն, այլ ոչ ամենքին, պատճառանօք, և ոչ ճշմարտութեամբ, զխոնարհումս զլիտց իւրեանց ցուցանէին» (Փար. 53). և ասով անելէն դուրս կ'ելլէին, որով՝ Յազկերտին կամքն ալ կատարուած կ'ըլլար «իբր թէ կատարեցին կամք անօրէնութեան» (Բ. Յեղանակ): Յազկերտ և իր արքունիքը մեծ ուրախութեամբ և ցնծութեամբ ընդունեցին նախարարաց այս որոշումը և Յազկերտին հրամանաւ իւրաքանչիւր նախարարին պէտք եղած արքայական պատիւներ և պարգևներ տրուեցան:

Յազկերտին ուրախութիւնը չափ ու սահման չունէր. «Ձայն իբրև լուաւ թագաւորն, յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեցեալ զզիսն հասանել նմա յօգնականութիւն, շրջեալ և աւերեալ զհաստատուն խորհուրդս ծառայիցն Աստուծոյ, և ահա մատուցանեն երկրպագութիւն արեգական, պատուեալ զնա զոհիւք և ամենայն օրինօք մոգութեանն» (Բ. Յեղանակ): Ուրախութիւններ և խրախճանութիւններ տեղի ունեցան և երեք ազգաց տանուէրները

և սեպուհները թի հանդերձ թագաւորական զարդարէին» (Փար. 54):

Պարսկաստանի ամէն կողմերը, ասորւշաններու մէջ գոհարանական հանդէսներ ևս կատարուեցան: 700ի չափ մոզեր որոշուեցան նախարարներուն հետ միասին երթալու «մեծ ոմն իշխանօմոզպետի» գլխաւորութեամբ: Մեկնելէն առաջ նախարարները միասնաբար Յազկերտ արքային ներկայացան և իրմէն հրաժեշտ առին իրենց տեղերը մեկնելու համար: Քաջն Վարդան Մամիկոնեան, հոն Յազկերտի հետեւեալ երկգիմի խօսքը ուղղեց, մինչև հիմա արիութեան և քաջութեան մեծ գործեր ցոյց տուած եմ, սակայն ասկէց վերջը ըսաւ. «Հնարիմ Օգնականութեամբ Ասուծոյ Գործել Գործ Այնպիսի, Զոր Ոչ Միայն Առաջի Ձեռ Արեաց, Այլ Եւ Ի Կայսեր Իրանն Եւ Յայլ Ազգս Պատմեցե Համբաւն Այն Մինչեւ Յլախեան» (Փար. 55):

Յիրաւի ստոյգ և մարգարէական եղաւ Քաջն Վարդանի վերի յայտարարութիւնը Յազկերտին: Բարիկ և Ատրնեբսհ Սիւնիք՝ Վասակ Սիւնեցիին զաւակները և բղելիս Աշուշա Վրացին իբրև պատանդ հոն պահուեցան:

Պարսից կողմէն բաւական թիւով այրուծի ևս պիտի տրուէր, որոնք պիտի ընկերանային Հայ նախարարներուն: Այս առթիւ, մասնաւոր հրահանգներ, պատուէրներ և յանձնարարութիւններ տրուեցան գործին յաջողութեամբ վերջանալուն համար: Մոզերը, հրահանգ ունէին ցրուելու Հայոց, Վրաց, Աղուանից, Լփնաց, Ազձնեաց, Կորդուաց և Ծօղէից երկիրները և հոն քարոզելու և կազմակերպելու Մազդեզական կրօնքը և անոր վարդապետութիւնը:

ՊԱՐԳԵԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

(Նարեկակիի՝ 6)



### ՊԱՏՄԱՒԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԻԱՆԴՈՒԹԵԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Նոր ժամանակներու մէջ փորձեր կը կատարուին, պատմութեան փիլիսոփայութիւնը հիմնաւորելու Քանթի իմաստասիրութեան օրէնքներուն վրայ: Քանթի մը իմաստասիրական դպրոցներ կ'առարկէին թէ պատմութիւնը կը տարբերի բնական գիտութիւններէն իբրև ոչ թէ ընդհանուրին, այլ մասնաւորին յղացքները. այս հաստատուումը միակողմանի ըլլալ կը թուի տրուած ըլլալով որ կ'ըմբռնէ զայն իբրև մասնաւոր և թէ ընդհանուր: Բայց պատմութեան մէջ իրենց յատուկ տեղերը ունին թէ՛ թանձրացեալը և թէ՛ մասնաւորը: Տակաւին՝ զանազան պարագաներու մէջ, ընդհանուրը կրնայ մասնաւոր ըլլալ: Օրինակի համար, առնենք «Պատմական Ազգութիւն» յղացքը. առաջին հերթով կը թուի ընդհանուր յղացք մը ըլլալ, բայց թանձրացեալ պատմական ազգութիւն մը միւսոյն ատեն և տարամերժօրէն պատմական յղացք մըն է: Իար մը ամբողջ, Նօմինալիստներու և Իրապաշտներու միջև վէճը անբաւական եղաւ մասնաւորին խորհուրդը ըմբռնելու համար: Ոչ իսկ Պղատոն թափանձած էր անոր խորհուրդին:

Անհրաժեշտ է որ պատմութեան և ընկերաբանութեան միջև զատորոշում մը ընենք միանգամ ընդ միշտ պարզելու համար այս երկուքին՝ մարդկային կեանքին մէջ կատարած դերը ըմբռնելու համար: Արդի գիտութիւնները այնքան ճիւղաւորուած են որ, հարկադրուած պիտի ըլլանք անոնցմէ շատերուն յարուցած հարցերը շօշափել, ինչպիսիք են օրինակի համար ընկերաբանութիւնն ու հոգեբանութիւնը, բայց առաւելաբար պիտի զբաղինք իմաստասիրութեամբ և պատմութեամբ: Պատմութեան իմաստասիրութիւնը. — պէտք է ի մտի ունենալ — ոգեկան իրականութիւններու տանող և զանոնք հասկնալի դարձնող կերպերէն մին է: Անիկա գերազանցապէս